

# Գյուղատնտեսության ոլորտում մրցունակության ապահովման պետական քաղաքականության հիմնական ուղղությունները<sup>1</sup>

*Հովակիմյան Ա. Ե.*

*տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի  
Եղեգնաձորի մասնաճյուղ, (Եղեգնաձոր, Հայաստան)  
arpinehovakimyan2017@gmail.com*

**Հանգուցքառեր՝** Գյուղատնտեսության մրցունակություն, գյուղատնտեսության կայուն զարգացում, գյուղատնտեսության ոլորտի ապահովագրություն, գյուղացիական կոոպերատիվներ, պարենային անվտանգություն:

## **Основные направления государственной политики обеспечения конкуренции в сельском хозяйстве**

*Овакимян А. Е.*

*кандидат экономических наук, доцент  
Армянский государственный экономический университет,  
Егегнадзорский филиал (Егегнадзор, Армения)  
arpinehovakimyan2017@gmail.com*

**Аннотация:** Основная миссия сельского хозяйства-обеспечение продовольственной безопасности и повышение благосостояния населения. Влияние природных факторов на устойчивое развитие аграрного сектора по-прежнему велико. Для управления этими рисками важны инструменты долгосрочной государственной поддержки, развитие технических, технологических и страховых систем. Развитие сельского хозяйства в Республике Армения считается приоритетным. В настоящее время развитию сельского хозяйства препятствует ряд факторов, таких как высокий риск ведения сельского хозяйства, небольшой размер ферм, фрагментация земель, низкая доля крупных товарных хозяйств, недостаточное сотрудничество фермеров, производственная рыночная инфраструктура. В современных условиях основным критерием эффективности сельскохозяйственного производства является уровень конкурентоспособности хозяйствующих субъектов. При этом в связи с глобальными социально-экономическими, геополитическими и экологическими проблемами важно поддерживать продовольственную безопасность страны, производственный и ресурсный потенциал агропромышленного комплекса, а также обеспечивать устойчивое развитие всего сельскохозяйственного производства.

**Ключевые слова:** Конкурентоспособность сельского хозяйства, устойчивое развитие сельского хозяйства, страхование аграрного сектора, сельскохозяйственные кооперативы, продовольственная безопасность.

## **Main Directions of the State Policy to Ensure Competition in Agriculture**

*Hovakimyan A. E.*

*PhD, Associate Professor  
Armenian State University of Economics,  
Yeghegnadzor branch (Armenia, Yeghegnadzor)  
arpinehovakimyan2017@gmail.com*

**Abstract:** The main mission of agriculture is to ensure food security and increase the welfare of the population. The influence of natural factors on the sustainable development of the agricultural sector is still great. Long-term state support tools, development of technical, technological and insurance systems are important for the management of these risks. The development of agriculture in the Republic of Armenia is considered a priority. At present, the development of agriculture is hindered by a number of factors, such as high risk of farming, small size of farms, land fragmentation, low share of large commodity farms, insufficient co-operation of farmers, productive market infrastructure. In modern conditions, the main criterion for the efficiency of agricultural production is the level of competitiveness of economic entities. At the same time, due to the global socio-economic, geopolitical and environmental problems, the country's

<sup>1</sup> Հոդվածը պատրաստվել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի միջոցով իրականացվող «Գյուղատնտեսության մրցունակության բարելավման հիմնախնդիրները ՀՀ Վայոց ձորի և Արարատի մարզերում» հետազոտական թեմայի շրջանակներում:

food security, production and resource potential of the agro-industrial complex, and the sustainable development of all agricultural production can be prioritized.

**Keywords:** Competitiveness of agriculture, sustainable development of agriculture, insurance of the agricultural sector, agricultural cooperatives, food security.

Մրցունակությունը, ինչպես տարածաշրջանային, այնպես էլ ազգային մակարդակում, ինչպես նաև դրա չափման մեթոդները, երկար ժամանակ եղել են տնտեսագետների և քաղաքական գործիչների ուշադրության կենտրոնում, քանի որ դրանից է կախված պետության տարբեր կառավարման մակարդակներում ընդունված ռազմավարական որոշումների վավերականությունը:

Մրցունակությունը ազգային տնտեսական համալիրի զարգացման աստիճանի նպատակն ու ցուցիչն է, իսկ տնտեսական անվտանգությունը դրա գոյության ամենակարևոր պայմանն է: Որքան զարգացած են մրցունակությունը որոշող գործոնները, այնքան կայուն և կենսունակ է երկրի տնտեսությունը: Ըստ այդմ, մրցունակությունը բնութագրող ցուցանիշների մեծ մասը միաժամանակ տնտեսական անվտանգությունը բնութագրող ցուցանիշներ են: Մրցունակության անկումը սպառնալիք է ստեղծում տնտեսության անվտանգության համար, մինչդեռ տնտեսական անվտանգությունը մրցունակության ապահովման և բարձրացման նախապայման է: «Մրցունակություն – անվտանգություն» համակարգը բարդ համակարգ է, որի վարքագիծը կախված է տարբեր բնույթի մեծ թվով գործոններից [2, с.299]:

Տնտեսական անվտանգությունն ու մրցունակությունը մշտական փոխգործակցության մեջ են: Ե՛վ տնտեսական անվտանգությունը, և՛ մրցունակությունը ազգային տնտեսական համալիրի և դրա բաղկացուցիչ մասերի բնութագրերն են:

Գյուղատնտեսության հիմնական առաքելությունը բնակչության պարենային անվտանգության ապահովումն ու բարեկեցության բարձրացումն է: Գյուղատնտեսության ոլորտի կայուն զարգացման վրա դեռևս մեծ է բնական գործոնների ազդեցությունը: Այդ ռիսկերի կառավարման համար կարևոր նշանակություն ունեն երկարաժամկետ պետական աջակցության գործիքները, տեխնիկական, տեխնոլոգիական և ապահովագրական համակարգերի զարգացումը: Գյուղատնտեսությունը համալիր ճյուղ է, որի զարգացումը նպաստում է ինչպես սննդի և թեթևարդյունաբերության, այնպես էլ ոլորտը սպասարկող արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը: Ավելին, գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար անհրաժեշտ է տնտեսության մյուս ճյուղերի զարգացման ապահովումը:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացումը դիտվում է որպես գերակայություն: Ներկայումս գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտում են մի շարք գործոններ, որոնցից կարելի է առանձնացնել գյուղատնտեսության վարման բարձր ռիսկայնությունը, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և հողաբաժինների մասնատվածությունը, խոշոր ապրանքային տնտեսությունների ցածր տեսակարար կշիռը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համատեղ գործունեության ոչ բավարար ընթացքը, արտադրական և շուկայական ենթակառուցվածքների թերզարգացվածությունը:

Ժամանակակից պայմաններում գյուղատնտեսական արտադրության արդյունավետության հիմնական չափանիշը տնտեսավարող սուբյեկտների մրցունակության մակարդակն է: Միևնույն ժամանակ, համաշխարհային սոցիալ-տնտեսական, աշխարհաքաղաքական և բնապահպանական խնդիրների առկայության պատճառով առաջնահերթ կարևոր է պահպանել երկրի պարենային անվտանգությունը, ագրոարդյունաբերական համալիրի արտադրական և ռեսուրսային ներուժը, ինչպես նաև ապահովել գյուղատնտեսական ամբողջ արտադրության կայուն զարգացում:

Գյուղատնտեսության մրցունակությունը առաջին հերթին որոշվում է բնական և մարդկային ռեսուրսների, կապիտալի և ենթակառուցվածքների օգտագործման ծավալով, վիճակով և բնույթով: Բայց մրցունակության ապահովումը միայն արտադրության գործոնների հաշվին սահմանափակ է, ինչը ենթադրում է լրացուցիչ արդյունավետ աղբյուրների ստեղծում՝ դրանց ռացիոնալ օգտագործման նպատակով: Նման աղբյուրները գործում են որպես արտադրության գործոնների որոշիչ: Հաշվի առնելով առկա տնտեսական իրավիճակը՝ գյուղատնտեսության զարգացման տեսանկյունից պետք է կարևորել ագրոարդյունաբերական արտադրության մրցունակությունը ապահովող արտադրական գործոնների հետևյալ որոշիչները՝ ներդրումներ, նորարարություն, հարակից և օժանդակ արդյունաբերության զարգացում, համարժեք պետական գյուղատնտեսական քաղաքականություն: Իր հերթին, որոշիչներն իրենք կարող են ապահովել գյուղատնտեսության մրցունակության մեկ այլ մակարդակ՝ կախված երկրում ստեղծված պայմաններից, որոնց բովանդակությունը թույլ է տալիս նրանց բնութագրել որպես տնտեսական, կազմակեր-


պական, քաղաքական, իրավական, սոցիալական և մշակութային:

Ժամանակակից պայմաններում հրատապ է դառնում գյուղատնտեսության ողջ հատվածը կայուն զարգացման ուղի տեղափոխելու անհրաժեշտությունը: Նման պահանջը ծագում է այն բանի շնորհիվ, որ համաշխարհայնացման և տարբեր շուկաներում արագ փոփոխվող իրավիճակի պայմաններում նոր խնդիրներ են առաջանում, առանց որոնց լուծման սահմանափակ են ագրոարդյունաբերական համալիրի ոլորտների զարգացման առկա հնարավորությունները: Այս համատեքստում կարևոր դեր է հատկացվում ինտեգրման կառույցներին, որոնց հիման վրա հնարավոր է արագացնել նորարարությունների զարգացումը, արդիականացնել ձեռնարկությունների կազմակերպական և արտադրական բազան, ինչպես նաև հարակից տեխնիկական և տեխնոլոգիական բաղադրիչները: Ֆինանսական ռեսուրսների անընդհատ պակասի պայմաններում ինտեգրման գործընթացների ակտիվացումը թույլ կտաներ գրավել ագրոարդյունաբերական արտադրության մեջ լրացուցիչ միջոցներ, որոնք կնպաստեն ողջ գյուղատնտեսական ոլորտում բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծմանը: Կայու-

նությունը գյուղատնտեսական համակարգի գոյության հիմնական չափանիշն է, որն ապահովվում է դրա ներքին բաղադրիչ տարրերի և որոշակի արտաքին գործոնների փոխազդեցությամբ: Պետք է նշել, որ գյուղատնտեսության ոլորտում վերարտադրության իրականացման համար կարևոր է ունենալ ոչ միայն վերարտադրության կայունություն, այլև արդյունավետ կայունություն:

Պրոֆեսոր Ա. Մադամինովը կարծում է. «Գյուղատնտեսության կայուն զարգացումը պետք է հասկանալ որպես սահմանափակ ռեսուրսների՝ հողերի, ջրի, նյութական, տեխնիկական և աշխատանքային ռեսուրսների, արդյունավետ օգտագործման կազմակերպում, ռիսկի նվազեցում (կանխում), որը նպատակաուղղված է գյուղատնտեսական տարածքային բազմազանության կայուն բարձր արտադրականության ապահովմանը, որպեսզի ավելի լավ բավարարվեն արագորեն աճող բնակչության կարիքները և կյանքի որակը [4, c.14]:

Գյուղատնտեսության ոլորտի կայուն զարգացման հայեցակարգի նախնական դրույթները կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով (գծապատկեր 1) [3, c.262]:



**Գծապատկեր 1.** Գյուղատնտեսության կայուն զարգացման հայեցակարգ

Շուկայական տնտեսությունում, ինչպես վկայում է Արևմտյան Եվրոպայի զարգացած երկրների փորձը, գյուղատնտեսության ոլորտի


կայուն զարգացումը և ագրոարդյունաբերական արտադրության արդյունավետությունը մեծապես կախված են ոլորտի պետական կարգա-

վորումից և աջակցությունից: Ներկայացնենք զարգացած երկրներում գյուղատնտեսության ոլորտի մրցունակության բարձրացման պետական աջակցության հիմնական ուղղությունները [1, c. 299]: Օրինակ, գյուղատնտեսության ոլորտը Մեծ Բրիտանիայում աշխարհում ամենաավտոմատացվածներից մեկն է և ունի բարձր արտադրողականություն՝ ներգրավված աշխատանքային ռեսուրսների նվազագույն մակարդակով (1,4%): Երկիրն ունի ֆերմերային տնտեսությունների (շուրջ 250 հազար) զարգացած համակարգ և անասնապահական հզոր համալիրներ: Անցած 20 տարիների ընթացքում սեփական գյուղատնտեսական արտադրանքի ինքնաբավության մակարդակը 68-ից հասել է 85%-ի: Մեծ Բրիտանիայում չկա գյուղատնտեսական վարկավորման մասնագիտացված համակարգ, և գյուղացիական տնտեսությունների աջակցությունն իրականացվում է պետական սուբսիդիաներով, որոնք կազմում են գյուղատնտեսական ապրանքների արժեքի ավելի քան մեկ քառորդը և ամենամեծներից մեկն է աշխարհում: Գյուղատնտեսական արտադրանքի տեսանկյունից Մեծ Բրիտանիան զբաղեցնում է աշխարհի առաջատար տեղերից մեկը, իսկ ոչխարաբուծությանը՝ առաջին տեղը Արևմտյան Եվրոպայում:

Գյուղատնտեսությունը Գերմանիայում բարձր զարգացած տնտեսության ճյուղ է: Գերմանիան Եվրամիության խոշորագույն գյուղատնտեսական արտադրողներից մեկն է: Երկրի տարածքի կեսից ավելին, այսինքն գրեթե 19 միլիոն հա, օգտագործվում է գյուղատնտեսության համար: Գյուղատնտեսական արտադրության բարձր ինտենսիվությունն

ապահովում է լայնածավալ մեքենայացման և էլեկտրաֆիկացման, պարարտանյութերի և վնասատուների դեմ պայքարի ժամանակակից միջոցների շնորհիվ: Հացահատիկի համախառն բերքի տեսանկյունից երկիրը երրորդ տեղում է Եվրոպայում [5, c. 270]: Գերմանիան ունի ներդրումների խրախուսման ծրագիր, որը երկարաժամկետ վարկերի համար տոկոսադրույքը նվազեցնում է 4%-ով: Վերջին տարիներին Գերմանիայում կոոպերատիվ ասոցիացիաներից գյուղատնտեսական արտադրողներին աջակցության մակարդակը զգալիորեն աճել է: Այս կազմակերպությունները ծառայություններ են մատուցում ջերմոցային տնտեսություններին՝ անհրաժեշտ տնկանյութի, էլեկտրաէներգիայի մատակարարման, ինչպես նաև աջակցում անասնաբուծության ոլորտին, ներառյալ անասունների սերմնավորումը և այլն: Այժմ Գերմանիայում, ինչպես Ֆրանսիայում, կոոպերատիվները միավորում են բոլոր գյուղատնտեսական ձեռնարկությունների 80%-ը:

Անդրադառնալով ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման և ոլորտի մրցունակության բարձրացման հիմնահարցերին անհրաժեշտ է նշել, որ 2020 թվականի ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող օպերատիվ տվյալների ամփոփմամբ ստացված հիմնական մարկրտնտեսական ցուցանիշներով տնտեսական ակտիվության մակարդակը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 92.5 %, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը՝ 101.4 %: 2020 թվականի տվյալներով գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը Հայաստանի Հանրապետությունում ՀՆԱ-ի մեջ կազմում է 11,7 % (գծապատկեր 2) [7, էջ.5]:



Գծապատկեր 2. 2020 թ. Գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում

Ուսումնասիրելով գյուղատնտեսության ոլորտի մրցունակության բարձրացման զարգացած երկրներների փորձը, կարող ենք փաստել, որ ոլորտի մրցունակության ապահովման առումով կարևորվում է պետական աջակցության ծրագրերի մշակումն ու իրականացումը հետևյալ ուղղություններով.


- ✓ **Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակմամբ զբաղվող տնտեսության ճյուղերի զարգացման խթանում:**

Վերլուծելով ՀՀ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի 2020թ. տարեկան հաշվետվությունը պարզ է դառնում, որ գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում 2020 թվականին հաստատվել է 181 հայտ՝ 22.3 մլրդ դրամի չափով, կնքվել է բերքի գնման 16017 պայմանագիր՝ 703.4 մլն դրամ սուբսիդավորման գումարի չափով:

✓ **Գյուղատնտեսության ոլորտում տեխնոլոգիական նորարարությունների ներդրման արդյունքում գյուղատնտեսության ոլորտի մրցունակության բարձրացում:**

Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատա-

պտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագրի շրջանակներում 2020 թ. տրամադրվել է 5.4 մլրդ դրամ գումարի՝ 46 միավոր վարկ, 494.4 հա այգեհիմնման համար, սուբսիդավորման գումարը կազմել է 187.3 մլն դրամ:



**Գծապատկեր 3.** 2020 թ. հիմնված ինտենսիվ այգիների տարածքներն՝ ըստ մարզերի, հա


Նախորդ տարվա համեմատ շահառուների թիվն ավելացել է 3 անգամ, իսկ ինտենսիվ այգիների մակերեսը՝ 9.7 անգամ [7, էջ.16]:

Անդրադառնալով փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերանորոգման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրված փոխհատուցումներին պետք է նշել, որ նշված ծրագրի շրջանակներում փոխհատուցումները 2019թ. կազմել են երկու փոխհատուցում՝ 14.5 մլն. դրամ, իսկ 2020թ.՝

քսան փոխհատուցում՝ ընդհանուր 230.9 մլն. դրամ արժեքով [7, էջ.23]:


✓ **Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի և տոկոսադրույքների սուբսիդավորում:**

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերից՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակում 2020 թվականին տրամադրվել է 36608 միավոր վարկ՝ 63.4 մլրդ դրամ գումարի չափով [7, էջ.7]:




**Գծապատկեր 4.** 2018-2020 թթ.-ին տրամադրված վարկերի ծավալը, մլն դրամ

Նախորդ տարվա համեմատ ծրագրից օգտվողների թիվն ավելացել է 4.1 անգամ, իսկ տրամադրված վարկերի գումարը՝ 1.8 անգամ:



**Գծապատկեր 5.** 2018-2020 թթ.-ին տրամադրված վարկերի քանակը, հատ

Ծրագրի շրջանակում 2018-2020 թվականներին տրամադրված վարկերի ծավալը ներկայացված է գծապատկեր 4-ում, իսկ քանակը՝ գծապատկեր 5-ում:



Գծապատկեր 6. Վարկերի քանակը և գումարն՝ ըստ մարզերի

Ըստ մարզերի տրամադրված վարկերի ծավալի և քանակի վերլուծությունից պարզ է դառնում, որ ծրագրից առավել շատ օգտվել են Արմավիրի, Արարատի, Ծիրակի և Գեղարքունիքի մարզերը, իսկ ամենաքիչը՝ Վայոց ձորի մարզը (գծապատկեր՝ 6) [7, էջ.8]:

✓ **Գյուղատնտեսության ոլորտի ապահովագրության համակարգի կիրառման ապահովում և հետագա ընդլայնում:**

Ինչպես հայտնի է գյուղատնտեսությունը համարվում է տնտեսության ամենառիսկային ոլորտներից մեկը, ինչով պայմանավորված ոլորտում մրցունակության բարձրացման համատեքստում կարևոր է գյուղատնտեսության ապահովագրական համակարգի կայացումը և դրա ծավալների ընդլայնումը: Ինչպես ցույց են տալիս գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի արդյունքները, 2020 թ. կնքվել է 1546 ապահովագրական պայմանագիր, ապահովագրավճարների թիվը կազմել է 130.5 մլն դրամ, իսկ սուբսիդավորված գումարը՝ 69.0 մլն դրամ: Ընդ որում 2020 թվականին գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական պատահարների հետևանքով ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվել է 300 ապահովագրական հատուցում՝ 151.3 մլն դրամի չափով [7, էջ.24]:

✓ **Գյուղացիական կոոպերացիայի համակարգի զարգացման ապահովում՝ գյուղատնտեսության մրցունակության բարձրացման տեսանկյունից:**

**տության մրցունակության բարձրացման տեսանկյունից:**

Գյուղատնտեսության ոլորտի առջև ծառայած խնդիրների լուծման, մրցունակության բարձրացման տեսանկյունից, կարևորվում է ոլորտում տնտեսվարողների համատեղ գործունեությունը, հատկապես՝ կոոպերատիվների ձևավորումը: Ներկայումս հանրապետությունում գործում է գյուղատնտեսական տարբեր ուղղվածություն ունեցող շուրջ 499 գյուղատնտեսական և գյուղատնտեսությունում գործունեություն իրականացնող սպառողական կոոպերատիվ, որից՝ 82-ը (16,4%)՝ գյուղատնտեսական, 417-ը (83,6%)՝ սպառողական: Կոոպերատիվների գործունեության հիմնական ուղղություններն են՝ բուսաբուծություն, անասնաբուծություն, խառը գյուղատնտեսություն, պտղաբուծություն, բանջարաբուծություն, հացահատիկային մշակաբույսերի աճեցում, կաթի մթերում ու հավաքագրում, մեղվաբուծություն, գյուղատնտեսական տեխնիկայի միջոցով ծառայությունների մատուցում, արոտավայրերի կառավարում [8]:

«**Էկոնոմիկայի նախարարության համակարգումը իրականացվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության»** ծրագիրը, որի հիմնական նպատակն է բարելավել անասնապահական ուղղվածություն ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ թիրախային համայնքներում արոտավայրերի և անասնա-

պահության համակարգերի արտադրողականությունն ու կայունությունը (հեռագնա արտոնների անցանելիության ապահովում, ջրաբեխացման, դեգրադացված արտոնների վերականգնում), և ապահովել ընտրված բարձրարժեք ագրոպարենային արժեչոթաներում արտադրվող և շուկայահանվող արտադրանքի ծավալների աճ: Ծրագիրն, ըստ էության, միտված է նաև բնակչության բարեկեցության, ինչպես նաև բնապահպանական անվտանգության բարելավմանը: Ծրագրի շրջանակներում հիմնվել են թվով 189 «Արտոգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, որոնց գործունեության հիմնական նպատակն է արոտավայրերի կառավարման և բարելավման միջոցով բարձրացնել անասնապահության արդյունավետությունը՝ անասնապահական տնտեսությունների եկամուտները:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացված Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման» ծրագրի շրջանակում հիմնվել է շուրջ 52 գյուղատնտեսական կոոպերատիվ, որից 14-ը վերամշակող կոոպերատիվներ են:

Ամփոփելով կատարված հետազոտությունը կարող ենք նշել, որ գյուղատնտեսության ոլորտը յուրահատուկ է իր բազմագործունեությամբ, և այդ կարևոր կենսական բնագավառի մրցունակության ապահովումը պայմանավորված է ոչ միայն ֆինանսական և ֆիզիկական կապիտալներով, այլև մարդկային, տեխնոլոգիական, բնական և սոցիալական կապիտալների համատեղ ներագրումով: Գյուղատնտեսության ոլորտը բավականին բարդ, շարժունակ, ներքին բազմազանություն ունեցող համակարգ է,

հետևաբար ոլորտում արմատական փոփոխությունների իրականացումը և մրցունակության բարձացումը հնարավոր է ապահովել միայն համալիր գործոնների հաշվառմամբ:

#### Օգտագործված գրականության ցանկ

1. **Беспалова А. А., Карпузова Э. М.** Сельское хозяйство Великобритании // Инновационные идеи молодых исследователей для агропромышленного комплекса России: Сборник материалов Всероссийской научно-практической конференции молодых ученых. 2017. – с. 298-300.
2. **Данилов И. П., Михайлова С. Ю., Никитин В. В.** Конкурентоспособность и безопасность экономики России – элементы системного единства // Вестник ЧГУ. 2012. №4.
3. **Данилов-Данильян В. Н., Лесов К. С.** Экологический вызов и устойчивое развитие. – М.: Процесс-Традиции, 2000 - с. 262.
4. **Мадаминов А. А.** Проблемы устойчивого развития аграрного сектора Таджикистана // Монография. – Д.: 2006 г. 299 с..
5. **Маринченко Т. Е., Суркова Т.А., Карнаухова Б. И.** Экологическое сельское хозяйство Германии // Пища. Экология. Качество: Труды XIII международной научно-практической конференции. Ответственные за выпуск: О.К. Мотовилов, Н.И. Пыжикова, Нициевская К.Н. 2016. – с. 266-272.
6. Տարեկան հաշվետվություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր, 2020: – Երևան, 2021 թ., [https://mineconomy.am/media/14702/%21Programs\\_Arm4.pdf](https://mineconomy.am/media/14702/%21Programs_Arm4.pdf)
7. <https://www.mineconomy.am/page/1331>

*Տճանաչվել է՝ 19.07.2021*

*Րեցենզրվել է՝ 23.07.2021*

*Մոտրվել է՝ 26.07.2021*